

Մեզ հրգօր բարեխօս մէջ արքայութեան,
Հայր Աստուծոյ տջակողմը կայնեցաւ:
Քեզ հաւատացեալքնիս, Յիսուս, տէ՛ միտք բնր,
Դու ես Փրկիչըն մեր, դու ես աէրըն մեր.
Հըխացուց օրրտնրնիս, չըթողուց աւեր,
Մարդասիրութիւնդ որ պայծառ փայլեցաւ:
Փըրկչիդ որ ես կ'աշեմ՝ սաստիկ կ'ամենչնամ.
Գարշնի մեղքերըս ես ինչպէս չըլամ.
Ներէ ինձի, հըրամայէ՛ առ քեզ դամ,
Ձի պանդրխտութիւնըս շատ երկարեցաւ:
Տեսութեանդ ծարսի եմ անպատում.
Ձի խնտար աս մասին երեսս է տըրտում.
Կարօտդ ձըգեր է ներքըս որոտում,
Ձեմ դիմանայ, սիրտըս ցաւօք լըցունեցաւ:
Նեղեալս յարքայութիւն հասաւ հանգչեցու,
Երանեմաց հետ միասին ցընծայու.
Ղուկիանսը զըւարթ գէմքիդ մայլեցու,
Ձիւնրի անգին արընովըդ զընունցաւ:

ՀԱՏԻԿՆ ԵԿԱԻ

Մօ աղաք, ելէք, վեր ելէք,
Մօ կըտըրճներ, վեր ելէք.
Գօնդ բըւնեցէք, դուք թըռէք.
Ձատիկն եկաւ, իընգացէք:
Ձատիկն եկաւ մե հասաւ,
Մտաւը զարգարւած տեսաւ.
Ձններ պաղեր հալեցաւ,
Սարեր ձորեր կանըցաւ: Մօ աղաք, և այլն:
Արե՛ կէտօրըն անցաւ,
Ժամու առնն մտնեցաւ.
Երեց նըլխաբքի նըստաւ,
Ժամու գըռներ բացուեցաւ: Մօ աղաք, և այլն:
Ժամհար կոշնակ ձեռք առեց,
Ձորս զի երես խաշ հանեց,
Տանիս ելաւ վեր վագնեց,
Կըշնակ զարկաւ, ժամ ձենեց: Մօ աղաք, և այլն:
Լուսար բաղիկ կը հագնէ.
Ձահ կանթըղներ կը վառի.
Սիկաակ լուրջաւ կը հագնի
Ժամար՝ պատարագ կ'անի: Մօ աղաք, և այլն:
Մօ ժողովուրդ, դիւս ելէք
Ժամ՝ գընացէք, մի դադրէք.
Կարօր հաւանն լուպիցէք,
Ձեր հետ առեք, օրհնեցէք: Մօ աղաք, և այլն:

Երեց ժամն դիւս կ'ենի,
Ձանգ աւետարան հետ կ'առնի,
Անլուիւ կը բերի,
Քրիստոս յարեաւ մե կ'առնի: Մօ աղաք, և այլն:
Մօ ասանդըն վեր ելէք,
Ձատիկ բռներ վեր առիք,
Կըթեց, քենեց մեկտեղ դիր,
Խառնկաթ, լանկեռ մօտ թօնիր: Մօ աղաք, և այլն:
Մօ ասանդըն վեր ելէք,
Տախտ աւելիր, օնղան դիր.
Ձատիկ աւաթ կեր եփիր,
Թանխուս, փըլաւ, խաւին դիր: Մօ աղաք, և այլն:
Պախիկ կերեր վըրցուցէք,
Պուտակ, քըլօր կոտրեցէք,
Սըխտօրի ասանդ դիւս ձըգէք,
Մածնի ծըծիւս ներս բերէք: Մօ աղաք, և այլն:
Հազար բարին լըցուցէք,
Սեղի վըրն շարեցէք,
Քաղցըր փոխնդ, սեր, արաղ,
Բաղարժ, կըթխոյ դա զըրէք:
Մօ աղաք, ելէք, վեր ելէք.
Մօ կըտըրճներ, վեր ելէք.
Գօնդ բըւնեցէք, դուք թըռէք.
Ձատիկն եկաւ, իընգացէք:

ԵՐԳ ՎԱՆԵՍԻՈՑ

